ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2025թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«1944 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՇԱՎԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԼԵՀԵՐԻ ԿՈՂՔԻՆ ՊԱՅՔԱՐՈՂ ՀԱՅԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ» ՀՈՒՇԱՔԱՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն 1944 թվականի Վարշավայի ապստամբության ժամանակ լեհերի կողքին պայքարող հայերի հիշատակին նվիրված հուշաքարը «Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքում գտնվող ցայտաղբյուրին կից տեղադրելու համար՝ համաձայն էսքիզի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

«ՀԱՅԵՐԸ ՎԱՐՇԱՎՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՈՒՄ»
ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԷՍՔԻԶ «ՀԱՂԹԱՆԱԿ» ՊՈՒՐԱԿՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2025

ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	
ԿՈԴ	**ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ**
1	ԿԱՉՄ
2	ԳԾԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
3	ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ «ՀԱՂԹԱՆԱԿ» ԱՅԳՈՒՄ
4	ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
5	ՃԱԿԱՏՆԵՐ
6	ԵՌԱՉԱՓ ՏԵՍՔ



ՆՈՐ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ «ՀԱՂԹԱՆԱԿ» ԱՑԳՈՒՄ /ԱՐԲԱՆՑԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ/

ՏԱՐԱԾՔԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ

ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հուշակոթողը նվիրվում է 1944թ. ֆաշիստական Գերմանիայի դեմ Լեհաստանի Վարշավա քաղաքի ապստամբության ժամանակ լեհ ժողովդրի կողքին, զենքը ձեռքին պայքարող հայերի հիշատակին: Նախատեսվում է կանգնեցնել Երևանի «Հաղթանակ» պուրակում, գլխավոր մուտքից դեպի «Մայր Հայաստան» հուշակոթող-թանգարան տանող ճանապարհի ձախ եզրին՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված Հայ հերոսների անունների հուշակոթողից ոչ հեռու: Առաջարկվող հուշարձանը տուֆից է լինելու, բազալտե հիմքով և պատվանդանով: Պատվանդանն ունի 1.20x1.20մ չափ հատակագծում և 10սմ բարձրություն: Հուշակոթողի ընդհանուր բարձրությունը 2.50մ է: Կոթողի վրա գրված են թվով 9 հայ հերոսների անունները երկլեզու արձանագրության մեջ:



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:90









ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՃԱԿԱՏ



ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԿՏՐՎԱԾՔ


ORMIANOM, Z BRONIĄ W RĘKU WALCZĄCYM
W POLSKICH ZERGACH Z NIEMIECKIMI
NAZISTAMI W POWSTANIU WARSZAWSKIM
1944 ROKU
WDZIĘCZNA POLSKA NA ZAWSZE
ARKADIU MATOSIAN • PORUCZNIK
RAFI CZAGACHANIAN • PD. PORUCZ.
NINA CZAGACHANIAN
MICHAL NAZARIAN • ST. SIERZANT
RUBEN MALCHASIAN • PLUTONOWY
WARTAN CZAGACHANIAN • STRZEL.
SASZA GALUSTIAN • STRZELEC
MICHAL GASPARIAN • STRZELEC
LEKARZ WOJSKOWY • NIEZNANY

ԵՌԱՉԱՓ ՏԵՍՔ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«1944 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՇԱՎԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԼԵՀԵՐԻ ԿՈՂՔԻՆ ՊԱՅՔԱՐՈՂ ՀԱՅԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՔԱՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ-ում Լեհաստանի դեսպանության կողմից 1944 թվականի Վարշավայի ապստամբության ժամանակ լեհերի կողքին պայքարող հայերի հիշատակին նվիրված հուշաքարի տեղադրման հարցում:

Վարշավայի ապստամբությանը մասնակցել են կրտսեր լեյտենանտ Հայկ Չոբանյանը /մականունը՝ Տունդրա/, Նինա Ճաղացպանյանը /մականունը՝ Վառ/, հրաձիգ Վարդան Ճաղացպանյանը /մականունը՝ Վարդան/, հրաձիգ Սաշա Գալուստյանը /մականունը՝ Սաշա/, հրաձիգ Միխալ Գասպարյանը, ավագ սերժանտ՝ Միխալ Նազարյանը /մականունը՝ Միխալ 2/:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հուշաքարի տեղադրման վերաբերյալ առարկություն չունի:

Հայ և լեհ ժողովուրդները մոտ են՝ ինչպես պատմությամբ, այնպես էլ մշակույթով ու արվեստով: Կարևոր ենք համարում արձանագրել, որ Հայաստանի անկախությունից ի վեր մեծ թափով զարգացել են Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային երկկողմ հարաբերությունները:

Հաշվի առնելով երկկողմ միջպետական հարաբերությունների զարգացումը, Ձեր քննարկմանն է ներկայացվում «Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքում գտնվող ցայտաղբյուրին կից հուշաքարի տեղադրման մասին որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ